ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2015 թվականի N32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԱՆԻ, ՈՒԺԱՆԻՍ ԵՎ ՆՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի «2015 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N27-Ա որոշման 1-ին կետի, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղվանի և Ուժանիս գյուղական համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ Նորավան գյուղական համայնքում՝ համայնքի ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2015 թվականի հունիսի 7-ին:
2. Ընդունել ի գիտություն, որ Աղվանի համայնքում գործող համայնքի ղեկավարի և Նորավան համայնքում՝ համայնքի ավագանու լիազորությունների ավարտման օրն է 2015 թվականի հուլիսի 25-ը, իսկ Ուժանիս համայնքում գործող համայնքի ղեկավարի լիազորությունների ավարտման օրն է 2015 թվականի օգոստոսի 7-ը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մարտի 17
ք. Կապան